տըրուել — եթէ ի հարկէ չափահաս1) է եւ օրէնքով զրկուած չէ իրաւունքից:

Ներկայացուցիչների ընտրութիւնը կատարւում է ըստ գաւառների: Իւրաքանչիւր գաւառ, որ ունի «մինչեւ 12,000 տուն բնակիչ», ընտրում է երկու պատգամաւոր կամ ինչպէս հեղինակն է ասում՝ «երկու փոխանորդ» (ԺԳ): Մի պատգամաւոր էլ տալիս է Հայոց բարձր հոգեւորականութիւնը — Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր եպիսկոպոսների եւ արքեպիսկոպոսների հետ միասին (ԺԲ, ՄԼԳ):

Այսպիսով Հայաստանի ազգային ժողովը կամ պարլամենտը — հեղինակը՝ «Տուն Հայոց» է կոչում — կազմուած պիտի լինի մօտաւորապէս 517 պատգամաւորներից, եթէ ընդունինք գաւառներու թիւը 258 եւ ամէն մէկ գաւառի ազգաբնակութեան թիւն էլ 12,000 տնից ոչ-պակաս: Ահա թէ ինչու Շահամիրեանը «Որոգայթ Փառաց»-ի Ա. մասում պատգամաւորների թիւը հաշւում է «յաւելի կամ պակաս հինգ հարիւր այրս» (էջ 64):

Ընտրութիւնները երկաստիճան են, բացի հոգեւորականութեան ներկայացուցչի ընտրութիւնից, որ մի աստիճան է.— «Ի Ծայրագոյն Հայրապետէ Ամենայն Հայոց հանդերձ բոլոր եպիսկոպոսիւք ընտրեսցին ի միջէ իւրեանց արքեպիսկոպոս մի եւ տացեն նմա նամակ փոխանորդութեան իւրեանց, ժամանակաւ երիս ամաւ» (ԺԲ):

Նախ՝ իւրաքանչիւր գիւղ, անկախ իր բընակիչների որքանութիւնից, ընտրում է մի պատուիրակ «ազգէն Հայոց, հաւատացելոց ի Քրիստոս, աւանդութեամբ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ եւ ծնունդ Հայաստանեայց, հեզ եւ խոնարհ» (ԺԳ): Ապա գաւառի բոլոր պատուիրակների ժողովը իր միջից վիճակով ընտրում է երկու ներկայացուցիչ, նստելու «ի յաթոռ տանն Հայոց իշխանութեամբ եւ տանուտէրութեամբ, եւ կացցեն եւ մնասցեն փոխանորդ բոլոր երկոտասան հազար տանց» (ԺԳ):

1) Չափահասութեան տարիքը ժառանգութեան համար 21 է (ՃՁԸ), իսկ քրէական գործերում, ստորագրութիւնների համար՝ 18 (Մ, ՄԱ):

Պատգամաւորներն ընտրւում են 3 տարով եւ ստանում են իւրաքանչիւրը տարեկան 3000 դահեկան իրենց ընտրողներից, ամէն մի տնից տարեկան կէս դահեկանի հաշուով: Հոգեւորական պատգամաւորը նոյնպէս նոյնքան է ըստանում իրեն ուղարկողներից: Պետութիւնը չի վճարում նրանց ռոճիկները, այլ իրենց ընտրողները, որպէսզի նրանք որեւէ կախում չունենալով պետութիւնից, կարողանան ազատօրէն կատարել իրենց ներկայացուցչական պարտականութիւնները «վասն բարութեան ժողովրդեան իւրեանց» (ԺԲ, ՄԼԲ, ՄԼԳ):

Ընտրութիւնները պիտի կատարուեն դեկտեմբեր ամսի մէջ այն հաշուով, որ յունուարի սկզբին բոլոր պատգամաւորները լինին մայրաքաղաքում, որպէսզի յունուարի 6-ից— որից Շահամիրեանը հաշւում է հայոց նոր տարին — սկսին իրենց պաշտօնը (ԺԴ):

Պատգամաւորները ներկայանում են յատուկ թղթով կամ մանդատով, ստորագրուած իրենց ընտրողների կողմից: Ահաւասիկ այդ մանդատի օրինակը.—

«Յայտնի լիցի ամենեցուն, որ մենք ներքոյ ձեռնադրողք բոլոր քեօփխայք գեղօրէից եւ ծերակուտօք եւ գաւառապետօք, իշխանօք աշխարհիս Վասպուրականի ըստ Օրինօք Հայոց ընտրեցաք ի միջէ մերմէ արս երկուս, այսինքն տեառն Մանասէ գեղջէն Հեռվարդու եւ տեառն Բրաբիոն ի գեղջէն Կարփու, կամաւ եւ յօժարութեամբ մերով տուաք կարէղութիւն փոխանորդութեան մերոյ երիս ամաւ ժամանակաւ առ Տեառն Մանասէի եւ Բրաբիոնի, զի մինն ի սմանէ բազմեցի փառօք եւ պատուօք ընդ փառաւոր տանուտէրս, ի գահն մեծ եւ բարեվարք տանն Հայոց, ազատապէս տացէ պաշտօն, ընդունեսցի Օրէնս կարգադրութեան եւ ընդ տանուտէրօք հանդերձ արասցէ հրաման ընդ Օրինօք հայոց ի վերայ ամենայն բնութեան մարդոյ ի յերեսս երկրին Հայաստանեայց, եւ զամենայն զոր ինչ հրաման ի գահէն մեծ եւ բարեվարք տանէն Հայոց հանդերձ փոխանորդիւ մերով ձեռնադրեալ ելցէ, ընդունելի մեր լիցի եւ համարեսցի իբրեւ կամք եւ հրամանս մեր, եւ մեք բոլոր ժողովրդիւ կատարումն հաստուցանեմք հրամայեցեալն ան-